Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
ապրիլի 2-ի նիստի N 14
արձանագրային որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2014 թ.
հուլիսի 10-ի նիստի N 29
արձանագրային որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԳԼՈԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| N | ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ԺԱՄԿԵՏ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շարունակում | Բյուջեի կատարողականի գնահատման մոնիթորինգի աշխատանքների որակի բարձրացում, անարդյունավետ և ոչ նպատակային ծախսերի բացահայտում | ՀՀ ֆինանսների նախարարություն | Ստեղծվելու են անհրաժեշտ նախադրյալներ լիարժեք ծրագ-րային բյուջետա-վորման անցման համար՝ սկսած 2018 թվականից | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ |
| 2. | Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համա-կարգի ընթացիկ բարեփո-խումների շարունակում | Փոփոխությունների էլեկտրոնային գրանցման, կանոնադ-րության փոփոխության էլեկտրոնային գրանցման հնարավորություն | ՀՀ արդարադատությա ն նախարարություն | 2015թ. | Համաշխարհային բանկ |
| 3. | Շինարարական նորմատիվա-տեխնիկական փաստաթղթե-րի կատարելագործում և մի-ջազգային ստանդարտներին համապատասխանեցում | Շինարարության ոլորտում նորմատիվային պահանջների միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանեցում՝ բնակչության անվտանգության, շենքերի ու շինությունների սեյսմակայունության, հուսալիության, էներգաարդյունավետության ապահովում, | ՀՀ քաղաքաշինու-թյան նախարարություն | 2016-2018թթ. | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ |

| N | ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ԺԱՄԿԵՏ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ |
|---|---|---|---|---|---|
| | | շինարարական արտադրանքի որակի բարձրացում, շինարարական տեխնոլոգիաների զարգացման խթանում, գործող գներով շինարարության արժեքի հաշվարկման մեթոդաբանության արդիականացում | | | |
| 4. | «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համապատասխան նախագծի մշակում՝ համայնքների խոշորացման յուրաքանչյուր պիլոտային ծրագրի իրականացումից առաջ | Տեղական ինքնակառավարման մարմինների կառավարման արդյունավետության բարձրացում, ծառայությունների մատուցման ծավալի և որակի բարձրացում՝ համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի իրականացման միջոցով | ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն | 2015թ. | ՀՀ պետական բյուջե<br>Միջազգային կազմակերպություններ<br>ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ |
| 5. | «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող օրենսդրական բազայի ձևավորում | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքի քառամյա զարգացման ծրագրի ընդունման թափանցիկության, հանրային իրազեկվածության բարձրացում, տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության խթանում | ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն | 2015թ. | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 6. | «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի վերանայում | ՀՀ ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի կատարելագործում, հավասար, ոչ խտրական և կանխատեսելի պայմանների, ներդրումային ծրագրերի իրականացման պետական երաշխիքների, ներդրողներին տրվող խթանների ու արտոնությունների, ինչպես նաև ներդրողներին աջակցող հիմնական կառույցների գործառույթների ամրագրում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2016թ. | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 7. | ՀՀ քաղաքացիական ավիացիայի ոլորտի օրենսդրական բարեփոխումների իրականացում | Ավիացիայի ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականցման համար իրավական հիմքի ապահովում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2015թ. | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |

| N | ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ԺԱՄԿԵՏ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ |
|---|---|---|---|---|---|
| 8. | Էլեկտրահաղորդման օդային գծերի, ենթակայանների կառուցման, վերակառուցման և վերազինման ծրագրերի իրականացում՝ միջազգային դոնոր կազմակերպություն-ների հետ համագործակ-ցության շրջանակներում | Էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացում ու էներգետիկ անվտանգության ապահովում, էլեկտրաէներգետիկական կապի ու կառավարման համակարգի արդիականացում և տարածաշրջանային ինտեգրացում | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | 2015-2018թթ. | Միջազգային ֆինանսական կազմակերպությու ններ |
| 9. | Առավել տարածված ոչ վարակիչ երեք հիվանդու-թյունների (սրտանոթային հիվանդություններ, շաքարա-յին դիաբետ, արգանդի վզի-կի քաղցկեղ) կանխարգել-մանն ուղղված զանգվածային սկրինինգային ծրագրերի իրականացում և բնակչու-թյան իրազեկում ոչ վարակիչ հիվանդությունների հիմնա-կան ռիսկի գործոնների վերաբերյալ | Հիվանդությունների վաղ հայտնաբերում, բուժման արդյունավետության բարձրացում ու երկարաժամկետ կտրվածքով մահացության նվազում | ՀՀ առողջապահու-թյան նախարարություն | 2015-2018թթ. | Համաշխարհային բանկ |
| 10. | Հայաստանի Հանրապետու-թյունում մալարիայի ներբեր-ման և արմատավորման կանխարգելում | Հայաստանի Հանրապետությունը մալարիայից ազատ գոտու կարգավիճակի պահպանում | ՀՀ առողջապահու-թյան նախարարություն | 2015թ. | ՀՀ պետական բյուջե<br>ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ |
| 11. | Մագիստրոսի կրթական ծրագրի վերանայում | Կառավարում մասնագիտության շրջանակում «Գործարար կառավարում (վարչարարություն)» կրթական ծրագրի ներդրում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2015թ. | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 12. | Սերմնաբուծության, սերմար-տադրության, սերմապահո- | Գյուղատնտեսական մշակաբույսերի կենսաբանական ներուժի արդյունավետ օգտագործման միջոցով բուսաբու- | ՀՀ գյուղատնտեսության | 2015-2016թթ. | ՀՀ պետական |

| N | ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ԺԱՄԿԵՏ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ |
|---|---|---|---|---|---|
| | վության, բույսերի պաշտպա-նության ծրագրերի իրականացում | ծական արտադրանքի ծավալների և առաջարկի ավելացում | նախարարություն | | բյուջե<br>ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդ |
| 13. | Խոշոր եղջերավոր անասնա-բուծության զարգացման, անասնաբուժական հակահա-մաճարակային միջոցառում-ների իրականացում | Գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավում, անասնապահական մթերքների արտադրության ծավալ-ների և առաջարկի ավելացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2015-2016թթ. | ՀՀ պետական բյուջե |
| 14. | Հանքային պարարտանյու-թերի և դիզելային վառելանյութի մատչելի գներով մատակարարման ծրագրերի իրականացում | Գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների գների մատչելիության բարձրացման միջոցով արտադրության մրցունակության բարձրացում և գյուղատնտեսական մթերքների առաջարկի ավելացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2015-2016թթ. | ՀՀ պետական բյուջե<br>ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդ |
| 15. | Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում | Գյուղատնտեսությունում տնտեսավարողների կարողությունների հզորացում, արտադրության ծավալների ընդլայնում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2015-2016թթ. | ՀՀ պետական բյուջե |
| 16. | Բարձր լեռնային և սահմա-նամերձ գյուղական համայնք-ներում բնական կերահան-դակների արդյունավետ օգտագործման, անասնապա-հական կոոպերատիվների կարողությունների հզորաց-ման, անասնապահական ծագման մթերքների իրաց-ման համակարգի բարելավ-ման միջոցառումների | Գյուղատնտեսական բնական ռեսուրսների ներուժի արդյունավետ օգտագործման, արտադրության կազմակերպման ձևերի կատարելագործման, իրացման համակարգի բարելավման միջոցով անասնապահական մթերքների արտադրության ծավալների և առաջարկի ավելացում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2015-2016թթ. | Համաշխարհային բանկ |

| N | ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ԺԱՄԿԵՏ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ |
|---|---|---|---|---|---|
| | իրականացում | | | | |
| 17. | Գյուղատնտեսությունում տնտեսավարողներին խորհրդատվության տրամադրման, գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման միջոցառումների իրականացում | Գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման խթանում և գործունեության ծավալների ընդլայնում | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2015-2016թթ. | ՀՀ պետական բյուջե<br>Միջազգային ֆինանսական կազմակերպություններ |
| 18. | «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | Արտասահմանյան պահառուների համար ՀՀ շուկայի գրավչության բարձրացում | ՀՀ կենտրոնական բանկ<br>(համաձայնությամբ) | 2015թ. | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 19. | Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ներքո նախատեսված ծրագրերի իրականացում | Տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնում, արտահանման ծավալների աճ և դիվեսիֆիկացիա | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ<br>(համաձայնությամբ) | 2015թ. | ՀՀ պետական բյուջե |
| 20 | «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածք» վարկային ծրագրի իրականացում ՀԲ հետ համագործակցությամբ | Միջազգային ստանդարտներին համապատասխան որակի ենթակառուցվածքների ներդրում, օտարերկրյա ներդրումների խթանում, արտահանման կարողությունների ընդլայնում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2015-2017թթ. | Համաշխարհային բանկ |
| 21. | Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների տարեկան ծրագրի իրականացում | Գործարար միջավայրի կատարելագործում, վարչարարության դյուրինացում, հաշվետվողականության վրա կատարվող ծախսերի նվազեցում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2015թ. | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում |
| 22 | Տնտեսության ինովացիոն զարգացման | Տնտեսության ինովացիոն զարգացման հիմքերի ամրապնդում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2015թ. | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| N | ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | ՆՊԱՏԱԿ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ԺԱՄԿԵՏ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ |
|---|---|---|---|---|---|
| | ռազմավարության ամրագրում | | | | |
| 23 | Հայաստանի Հանրապետու-թյան հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում | Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի նվազեցում, պետական կառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահության ամրապնդում և կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության սկզբունքի խթանում | ՀՀ կառավարության աշխատակազմ | 2015-2018թթ. | ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

»: